**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

06.08.2018թ.
ժամը $11^{30}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԻՇ վարչության Մ բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան,
ՀՀ ԶՈՒ ԻՇ վարչության Մ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան,
**Բացակայում է՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության հրվ. զին. և հետախուզ. միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ի և «Հրաբուխ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:
Քանի որ 31.07.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունների հավաստիությունը համարել համապատասխանող:
1.2 06.08.2018թ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:
1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**Գնահատող** Հ. Կարապետյան

**Գնահատող** Յու. Եսայան

**Գնահատող** Ա. Մուրադյան

**Գնումները համակարգող** Գ. Գևորգյան